

«Պետական սեփականություն հանդիսացող հատուկ մշակված համակարգի (բջջային հավելված) տեխնիկական բնութագիրը (նկարագրությունը, ինտերֆեյսը) և դրանից օգտվելու կարգը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N _____-Ն

ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՏՈՒԿ ՄՇԱԿՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ (ԲԶԶԱՅԻՆ ՀԱՎԵԼՎԱԾ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԻՆՏԵՐՖԵՅՍԸ) ԵՎ ԴՐԱՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքի 7.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Սահմանել`

1) պետական սեփականություն հանդիսացող հատուկ մշակված համակարգի (այսուհետ` բջջային հավելված) տեխնիկական բնութագիրը (նկարագրությունը, ինտերֆեյսը)` համաձայն N 1 հավելվածի,

2) բջջային հավելվածից օգտվելու կարգը` համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում բջջային հավելվածը շահագործման

հանձնելու օրվանից, բայց ոչ ուշ քան 2021 թվականի հունվարի 1-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

Ն.ՓԱՇԻՆՅԱՆ

2020թ. _____ «____»

Երևան